«Յունիբանկ» ԲԲԸ Վարչության 30.07.2024թ. որոշման համաձայն, բանկի ներքոնշյալ սակագները գործել են մինչև 06.08.2024թ.:

Տեղեկատվական ամփոփագիր										
Ավանդի հիմնական պայմանները										
Ավանդի ներդրման արժույթը			**ՀՀ դրամ**	**ԱՄՆ Դոլար**	**Եվրո**	**ՌԴ ռուբլի**	**ՀՀ դրամ**	**ԱՄՆ Դոլար**	**Եվրո**	**ՌԴ ռուբլի**
Ավանդի ներդրման ժամկետը	**Տոկոսների վճարման կարգը**		Տարեկան անվանական տոկոսադրույք				Տարեկան տոկոսային եկամտաբերություն			
30-90 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ**	5.25%	-	-	-	5.25%-5.34%	-	-	-
	ժամկետի վերջում		5.5%	-	-	-	5.50%	-	-	-
91 – 180 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ**	7.5%	0.25%	-	0.5%	7.69%-7.74%	0.25%	-	0.50%
	ժամկետի վերջում		8%	0.25%	-	1.5%	8.00%	0.25%	-	1.50%
181 – 365 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ**	8.7%	2.25%	-	0.5%	9.02%-9.06%	2.27%	-	0.50%
	ժամկետի վերջում		9%	2.5%	-	1.5%	9.00%	2.50%	-	1.50%
366 – 549 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ**	9.5%	4%	1.6%	3.5%	9.92%-9.94%	4.07%-4.08%	1.61%	3.56%
	ժամկետի վերջում		9.8%	4.2%	2%	4%	9.80%	4.20%	2.00%	4.00%
550 – 730 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային**	9.7%	4%	2.25%	4.5%	10.16%	4.08%	2.27%	4.60%

		հաշիվ							
	ժամկետի վերջում	9.9%	4.25%	2.5%	5%	9.90%	4.25%	2.50%	5.00%
Ավանդի ներդրման նվազագույն գումարը		100,000 AMD	1000 USD	1000 EUR	20,000 RUR				
Ավանդի առավելագույն գումարը		100,000,000 * AMD	300,000 * USD	300,000 * EUR	20,000,000* RUR				
*Առավելագույն գումարը գերազանցող ավանդների համար տոկոսադրույքները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:									
Ժամկետային ավանդ, որը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:									
Տոկոսների վճարման պայմաններն իրականացվում են ավանդատուի ցանկությամբ՝ ժամկետի վերջում կամ ամենամսյա, ավանդատուի բանկային հաշվին կամ քարտային հաշվին: Տոկոսների կապիտալացում չի իրականացվում:									
Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր՝ UNIPAY կոմունալ վճարումների միասնական համակարգի քարտ, իրավաբանական անձանց՝ «Ինտերնետ Բանկ-Հաճախորդ» համակարգ:									

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սակագներ և տուժանքներ

1. Ժամկետային ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Եթե հաճախորդը «Յունիբանկ» ԲԲԸ-ում չունի բանկային հաշիվներ, ապա դրամային ժամկետային ավանդ ներդնող ավանդատուի համար Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում բացի արտարժութային բանկային հաշվից, բացվում է նաև ՀՀ դրամով բանկային հաշիվ:

2. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ժամկետային ավանդատու ֆիզիկական անձ հաճախորդների հաշիվների համար յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 1200 և 100000 ՀՀ դրամ: Ավանդային հաշվի

քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքներ չի իրականացրել:

3. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ավանդատու հաճախորդների յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 5000 և 100000 ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Առանձին տեղեկանքի կամ փաստաթղթի կրկնօրինակների տրամադրման վճարը կազմում է 1000 ՀՀ դրամ, իսկ թղթապանակի (որոշակի ժամանակաշրջանի փաստաթղթերի) համար՝ 5000 ՀՀ դրամ: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքներ չի իրականացրել:

4. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում.

ա/ ավանդի գումարից գանձվում են արդեն իսկ վճարված տոկոսագումարները, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների ամենամսյա վճարում,

բ/ կատարվում է տոկոսների վերահաշվարկ ավանդը բանկում ներդրած փաստացի ժամանակահատվածի համար բանկի կողմից սահմանված ցպահանջ ավանդի տոկոսադրույքով:

5. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է ավանդի պայմանագրով սահմանված պայմաններով: Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը կամ այն երկարաձգել պայմանագրում սահմանված պայմանների համաձայն, ապա ժամկետային ավանդը համարվում է երկարաձգված՝ բանկի կողմից սահմանված ցպահանջ ավանդի պայմաններով:

Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ «Յունիբանկ» ԲԲԸ Վարչության կողմից հաստատված դրույքների և սակագների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշիվների սպասարկման պայմանագրով:

6. Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

7. Բանկային ավանդի պայմանագրով սահմանված Ավանդի համար տոկոսների չափը ավանդի գործողության ընթացքում Բանկի կողմից ենթակա չէ միակողմանիորեն նվազեցման:

8. Ավանդային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են Անվանական տոկոսադրույքի հիման վրա:

9. Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը ավանդատուի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում: